



Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ ՆԻՍՏԻ

21 հունվարի 2011 թվականի N 1

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Ս. Տեր-Սիմոնյան

Հանձնաժողովի անդամներ՝

- Ա. Բախշյան, Ֆ. Բերիկյան, Ա. Ղուկասյան, Ա. Հակոբյան,
- Ա. Օսիկյան, Կ. Արեյան, Ա. Եսայան, Կ. Բեգլարյան,
- Ա. Թամազյան, Ա. Պարսամյան, Ա. Ղազարյան,
- Մ. Մարտիրոսյան, Բ. Սարգսյան, Ա. Բեջանյան, Ռ. Լևոնյան,
- Ա. Եղիազարյան

Հրավիրված էին՝

Ա. Դարբինյան	«Հայաստան» համահայկական հիմնադրամ
Ա. Թոռչյան	ՀՀ առողջապահության նախարարություն
Ղ. Վարդանյան	«Մատենադարան» հիմնադրամ
Հ. Ստեփանյան	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ
Մ. Միքայելյան	«Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ
Լ. Ղուկան	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ
Ա. Պողոսյան	«Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամ
Գ. Մանասարյան	Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ
Լ. Օհանյան	Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ
Ա. Գամաղեյան	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Գ. Շահազադյան	«Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպություն
Զ. Սաջոնյան	«Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի աուդիո-վիզուալ սրահի վերանորոգում» ծրագրի մասին:

(Ա. Դարբինյան, Ա. Թամազյան, Կ. Բեգլարյան, Ս. Տեր-Սիմոնյան)

- 1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
- 2. Սույն կետով և լրացուցիչ օրակարգի 1-ին կետով ներկայացված որոշման նախագիծերը ներկայացնել որպես մեկ միասնական որոշում:
- 3. Առաջարկել կազմակերպությանը սույն կետով և լրացուցիչ օրակարգի 1-ին կետով ներկայացված ծրագրերը ներկայացնել մեկ միասնական ծրագրով:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղի ագրոտեխնիկական բազայի համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագրի մասին:
(Ա. Դարբինյան, Ա. Բախշյան, Կ. Արեյան, Ա. Եսայան, Ա. Թամազյան, Ս. Տեր-Սիմոնյան)

- 1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
- 2. Առաջարկել կազմակերպությանը խմբագրել ներկայացված ծրագիրը և ծրագրին կցել ներմուծվող բեռի ցանկը:
- 3. Որոշումը ստորագրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության հետ համաձայնեցնելուց հետո:

3. «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011-2012 թվականներին իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին:
(Լ. Պարտազգյան, Ս. Տեր-Սիմոնյան)

- 1. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 14-րդ կետի՝ հանձնաժողովը որոշեց ներկայացված հայտը քննարկել իրականացնողի բացակայությամբ:
- 2. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 20-րդ կետի «բ» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը քննարկման արդյունքում աննպատակահարմար դիտեց նշված ծրագիրը բարեգործական որակել և քվեարկությամբ միաձայն որոշեց մերժել ներկայացված հայտը:

4. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման ծրագրերի մասին
(Ա. Բարխուդարյան)

4.1 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

- 1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
- 4.2 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

- 1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
- 4.3 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

- 1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
- 4.4 Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի հասցեով բեռի ներմուծման և անհատուց հանձնման ծրագրի մասին:

- 1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
- 4.5 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4.6 «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4.7 «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4.8 «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ) (N 1):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ) (N 2):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ) (N 4):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 19-ի N Մ-835-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4.14 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4.15 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-896-Ա որոշման մեջ լրացում կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4.16 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ) (1):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4.17 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ) (2):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին (Ա. Բարխուդարյան)

5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի N Մ-318-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.2 Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ) (N 2):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-748-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի հոկտեմբերի 27-ի N Մ-640-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-895-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-897-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.7 Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-904-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.8 Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 20-ի N Մ-807-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

6. Այլ հարցեր

6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-760-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ կատարելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

Լ Բ Ա Ց ՈՒ Ց Ի Չ

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի մասնակի կառավորում» ծրագրի մասին:

(Ա. Դարբինյան, Կ. Բեգլարյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

2. Սույն կետով և օրակարգի 1-ին կետով ներկայացված որոշման նախագծերը նախապատրաստել, որպես մեկ միասնական որոշում:

3. Առաջարկել կազմակերպությանը սույն կետով և օրակարգի 1-ին կետով ներկայացված ծրագրերը ներկայացնել մեկ միասնական ծրագրով:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանակերտի ջրամատակարարման համակարգի 10-րդ և 11-րդ գոտիների բարելավման նախագծման փորձաքննություն» օժանդակ ծրագրի մասին:

(Ա. Դարբինյան, Կ. Արեյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

3. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից իրականացվող «Նոր Նորքի հանրակացարանների առաջին մասնաշենքի սանհանգույցների, հատակների, տանիքի, «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ի առաջին հարկի հիմնանորոգում» ծրագրի շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության» ծրագրի մասին:

(Լ. Ղուկաս, Ա. Բախշյան, Կ. Բեգլարյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

2. Խմբագրել ներկայացված որոշման նախագիծը որպես Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-906-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարք:

3. Որոշումը ստորագրել նախագիծը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության հետ համաձայնեցնելուց հետո:

4. Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2011-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառուցյի պահպանում և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին:

(Գ. Մանասարյան, Ա. Բախշյան, Ա. Եսայան, Կ. Բեգլարյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման ծրագրերի մասին

(Ա. Բարխուդարյան):

5.1 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.2 «Միջայեյյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ) (N 3):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ) (N 5):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.6 Հայաստանի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

6. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին

(Ա. Բարխուդարյան)


6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-712-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

7. Այլ հարցեր:

7.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-638-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հունվարի 2011 թվականի N Մ-001-Ա
քաղ. երևան**

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՍԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱ-
ԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «2011-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑ-
ՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 3/3.8-1/10689-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 5190-10, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի N 04/07.2/13238-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N ԱԱ/3-4/3233-10 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակելի Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող՝ 116 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «2011-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառուցվածքի պահպանում և հետագա զարգացմանն աջակցություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՀՁ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2003 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N 282767 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև 2012 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածում բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 500000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «ԱրմենՏել» ՀՁ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2004 թվականի ապրիլի 12-ին կնքված՝ N 010253967 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև 2012 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 600000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի օգոստոսի 21-ին կնքված՝ N 008241 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև 2012 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1000000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

4) «Արմինկո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01501597) 2009 թվականի փետրվարի 2-ին կնքված՝ N 20681 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև 2012 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածում համակարգչային կապի ծառայությունների մատուցում՝ 600000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


5) «Նոյյան Տապան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02514983) 2010 թվականի դեկտեմբերի 17-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև 2012 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածում գրենական և գրասենյակային պարագաների ձեռքբերում՝ 450000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամին՝


1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի նախագահի Հ.Կարապետյանի կողմից


«19» հունվարի 2010թ.


2011-2012 թթ. ընթացքում ՀՀ գիտական ենթակառուցյի պահպանման և հետագա զարգացման աջակցություն
Ծ Ր Ա Պ Ի Ը



1. Ծրագրի նպատակը	Ծրագրի անմիջական նպատակներն են աջակցել՝ - Հայաստանի Հանրապետության գիտական համակարգի տեխնիկական զարգացմանն ու արդիականացմանը, - միջազգային գիտական համակարգի հետ ՀՀ գիտական հանրության ինտեգրման գործընթացին, - մտավոր ներուժի արտահոսքի կանխման գործընթացին, - ՀՀ գիտական համակարգը երիտասարդ կադրերով համալրման գործընթացին, - միջազգային չափորոշիչներին համապատասխանող քաղաքացիական բնույթի գիտական հետազոտությունների իրականացմանը:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել մաքսային և հարկային արտոնություններից:
3. Բարեգործը	ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամը (ՔՀՄՀ), 1530 Wilson Blvd. Arlington, VA 22209, USA. Tel.:+1(703)-526-9720
4. Ծրագիրը կատարողը	Ծրագիրը իրականացնում է Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՏԱՀ), քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ 00040233
5. Ծրագրի իրականացման վայրը	Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են ՀՀ գիտական և կրթական համակարգում գործող ոչ առևտրային կազմակերպություններում և առնչվում են գիտության և կրթության բնագավառին:




6. Ծրագրի բյուջեն	<p>Ծրագրի բյուջեն կազմում է 116000000 (հարյուր տասնվեց միլիոն) դրամ:</p> <p>Ֆինանսավորման աղբյուր է հանդիսանում ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամը (ՔՀՄՀ), 1530 Wilson Blvd. Arlington, VA 22209, USA. Tel.:+1(703)-526-9720 Ծրագրի ընդհանուր ֆինանսական աջակցության ծավալները բաշխվելու են ըստ հետևյալ ուղղությունների՝</p> <ul style="list-style-type: none"> - հայկական վիրտուալ գիտական գրադարան (AVSL) - 24000000 (քսանչորս միլիոն) դրամ, որից <ul style="list-style-type: none"> - սարքերի, կյուբերի և ծառայությունների ձեռքբերում - 14000000 (տասնչորս միլիոն) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 13000000 (տասներեք միլիոն) դրամ 2011թ. ընթացքում, - ուսուցողական սեմինարներ - 10000000 (տասը միլիոն) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 9000000 (ինը միլիոն) դրամ 2011թ. ընթացքում, - զարգացում և նոր ֆինանսական աղբյուրների հայթայթում (D&S) - 20000000 (քսան միլիոն) դրամ, որից <ul style="list-style-type: none"> - գովազդային կյուբեր և բուկլետներ - 10000000 (տասը միլիոն) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 9000000 (ինը միլիոն) դրամ 2011թ. ընթացքում, - ճանապարհորդական ծախսեր - 10000000 (տասը միլիոն) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 9000000 (ինը միլիոն) դրամ 2011թ. ընթացքում, - ասպիրանտական հետազոտությունների աջակցություն-08 (GRSP-08) - 2000000 (երկու միլիոն) դրամ, որից <ul style="list-style-type: none"> - անհատական ֆինանսական աջակցություն - 800000 (ութ հարյուր հազար)
-------------------	--




	<p>դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 734000 (յոթ հարյուր երեսունչորս հազար) դրամ 2011թ. ընթացքում,</p> <p>- սարքերի, կույթերի և ծառայությունների ձեռքբերում - 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 1000000 (մեկ միլիոն) դրամ 2011թ. ընթացքում,</p> <p>- երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցություն-09 (SASP) - 14000000 (տասնչորս միլիոն) դրամ, որից</p> <p>- անհատական ֆինանսական աջակցություն - 2800000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 2560000 (երկու միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) դրամ 2011թ. ընթացքում,</p> <p>- սարքերի, կույթերի և ծառայությունների ձեռքբերում - 6400000 (վեց միլիոն չորս հարյուր հազար) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 6300000 (վեց միլիոն երեք հարյուր հազար) դրամ 2011թ. ընթացքում,</p> <p>- ճանապարհորդական ծախսեր - 4800000 (չորս միլիոն ութ հարյուր հազար) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 4400000 (չորս միլիոն չորս հարյուր հազար) դրամ 2011թ. ընթացքում,</p> <p>- ասպիրանտական հետազոտությունների աջակցություն-09 (GRSP-09) - 20000000 (քսան միլիոն) դրամ, որից</p> <p>- անհատական ֆինանսական աջակցություն - 2800000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 2560000 (երկու միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) դրամ 2011թ. ընթացքում,</p> <p>- սարքերի, կույթերի և ծառայությունների ձեռքբերում - 11200000 (տասնմեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 11000000 (տասնմեկ միլիոն) դրամ 2011թ.</p>
--	--

 	<p>ընթացքում,</p> <p>- ճանապարհորդական ծախսեր - 6000000 (վեց միլիոն) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 5500000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ 2011թ. ընթացքում,</p> <p>- գիտական ճանապարհորդությունների աջակցության ծրագիր (TSP) - 8000000 (ութ միլիոն) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 7500000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ 2011թ. ընթացքում,</p> <p>- Հայաստանում միջազգային գիտաժողովների կազմակերպման աջակցություն (ISCSP) - 4800000 (չորս միլիոն ութ հարյուր հազար) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 4000000 (չորս միլիոն) դրամ 2011թ. ընթացքում,</p> <p>- Գ.ՍՏԱՀ-ի կազմակերպչական ծախսեր - 23200000 (քսաներեք միլիոն երկու հարյուր հազար) դրամ, որից</p> <p>- աշխատավարձ - 11667000 (տասնմեկ միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 20045000 (քսան միլիոն քառասունհինգ հազար) դրամ 2011թ. ընթացքում,</p> <p>- գրասենյակի երեք հիմնական հեռախոս - 600000 (վեց հարյուր հազար) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 550000 (հինգ հարյուր հիսուն հազար) դրամ 2011թ. ընթացքում,</p> <p>- գրասենյակի բջջային հեռախոս - 500000 (հինգ հարյուր հազար) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 460000 (չորս հարյուր վաթսուն հազար) դրամ 2011թ. ընթացքում,</p> <p>- գրասենյակային ինտերնետային կապ - 600000 (վեց հարյուր հազար) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 550000 (հինգ հարյուր հիսուն հազար) դրամ 2011թ. ընթացքում,</p> <p>- գրասենյակի էլեկտրաէներգիայի ծախսեր - 1000000 (մեկ միլիոն) դրամ,</p>
---	---

		<p>2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 900000 (ինը հարյուր հազար) դրամ 2011թ. ընթացքում, - ԳԱՏԱՀ-ի աշխատակիցների առողջական ապահովագրություն - 833000 (ութ հարյուր երեսուներեք հազար) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 764000 (յոթ հարյուր վաթսուհինգ հազար) դրամ 2011թ. ընթացքում, - աուդիտ - 1000000 (մեկ միլիոն) դրամ, 2011թ. մարտի 1-ից մինչև 2011թ. դեկտեմբերի 31-ը, - սարքերի, նյութերի և ծառայությունների ձեռքբերում - 1600000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամ 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ 2011թ. ընթացքում:</p>
7.	Բարեգործություն ստացողը	<p>Նշված ծրագրով բարեգործություն ստացողներ են հանդիսանում՝ Երևանի պետական համալսարանը (ք. Երևան, Ա.Մանուկյան 1, ՀՎՀՀ 01506928), ինչպես նաև ՀՀ գիտական և կրթական համակարգում գործող ոչ առևտրային բոլոր կազմակերպությունները, որոնց կողմից ներկայացված առաջարկությունները գիտական անկախ փորձաքննության արդյունքներով ֆինանսական աջակցության կերաշխավորվեն ծրագիրն իրականացնողի կողմից:</p>
8.	Օրագրի իրականացման տևողությունը	<p>Ներկայացվող ծրագրի տևողությունը կազմում է 12 ամիս, սկսած 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը:</p>
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>Նշված ծրագրի իրականացման նպատակով նախատեսվող միջոցառումները հանդիսանում են. դրամաշնորհի ֆինանսական և նյութական միջոցների ստացումն ու դրանց անհատույց տրամադրումը շնորհառուներին 116000000 (հարյուր տասնվեց միլիոն) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը, այդ թվում սարքերի, նյութերի և այլ անհրաժեշտ ծառայությունների ձեռքբերումն ու դրանց անհատույց տրամադրումը շնորհառուներին 58933000 (հիսուսութ միլիոն ինը հարյուր երեսուներեք հազար) դրամ, 2011թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. փետրվարի 1-ը:</p>



10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>Նշված ծրագրի շրջակակներում նախատեսվում է ձեռք բերել (ինչպես Հանրապետության ներքում, այնպես էլ Հանրապետությունից դուրս) համակարգչային տեխնիկա և օժանդակ նյութեր, լաբորատոր սարքավորում և կահույք, գրենական պիտույքներ, ինչպես նաև տարբեր ծառայություններ ընդամենը 58933000 (հիսուսութ միլիոն ինը հարյուր երեսուներեք հազար) դրամի (այդ գումարի չափով ակնկալվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ հարկային և մաքսային արտոնություններ):</p>
11.	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը,	<p>Նշված ծրագրից, որպես կազմակերպչական ծախսեր, «Բարեգործի» կողմից ԳԱՏԱՀ-ին տրամադրվելու է գումարի 20%, ինչը կազմում է 23200000 (քսաներեք միլիոն երկու հարյուր հազար) դրամ: Այդ գումարից 11667000 (տասնմեկ միլիոն վեց հարյուր վաթսուկյոթ հազար) դրամ նախատեսվում է ծախսել որպես աշխատակիցների աշխատավարձ, իսկ 11533000 (տասնմեկ միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար) դրամ՝ որպես գրասենյակային ծախսեր:</p>
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	<p>ՀՀ «Բարեգործության մասին» օրենքի դրույթներին համապատասխան Օրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ:</p>
13	Օրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	<p>Օրագրի իրականացման արդյունավետությունը, հիմնականում, վերահսկվելու է դոնոր կազմակերպության կողմից ներկայացվող ընթացիկ հաշվետվությունների հիման վրա: Միևնույն ժամանակ, ԳԱՏԱՀ-ի կողմից, սահմանված կարգով համապատասխան հաշվետվություններ են ներկայացվելու ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:</p>



/ Օրագրի ղեկավար

Ն. Կարապետյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հունվարի 2011 թվականի N Մ-002-Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱԶԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՈՎ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱ-
ՏՈՒՅՑ ՀԱՆՁՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 11-ի N 1.1/3.8-2/18-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հունվարի 10-ի N 03/07.2/13604-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N ԱԱ/3-6/3354-11 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011 թվականի հունվարի 10-ի N 01/4284-10 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից «ԱՅԲ» կրթական հիմնադրամի միջոցով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի հասցեով ստացված էկոլոգիական հետազոտությունների ուսումնական սարքավորումների (8 տեղ, 62 կգ ընդհանուր քաշով, 354470 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 52000 ռուբլի փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման և քաղաքային համայնքի թիվ 1 ու թիվ 2 միջնակարգ դպրոցներին անհատույց հանձնման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունվարի 2011 թվականի N Մ-003-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 11-ի N 1.1/3.8-2/22-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հունվարի 12-ի N ՀՔ/22/31-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 3-6/3351-10 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում երեխաների անվճար պատվաստման նպատակով ստացված 16000 սրվակ ԿԿԽ պատվաստանյութի՝ իր լուծիչով (15 տեղ, 284 կգ ընդհանուր քաշով, 46400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2908.65 ԱՄՆ-ի դոլար, «Ջվարթնոց» ՍՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժփնմանարկներին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հունվարի 2011 թվականի N Մ-004-Ա
քաղ. երևան**


**«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԵՆՈՎ ՍՏԱՅՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 11-ի N 1.1/3.8-2/17-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հունվարի 12-ի N ՀՔ/22/32-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի հունվարի 11-ի N ՖԲ/Մարտ/Մ-2/21-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N ԱԱ/3-6/84385-10, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի հունվարի 13-ի N 101/104.3/17-11 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 01/5271-10 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակելի ԱՄՆ-ի «Հայ ավետարանի առաքելություն» բարեգործական կազմակերպության կողմից «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի (183 տեղ, 4480 կգ ընդհանուր քաշով, 56400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 9000 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության Լոռու ու Շիրակի մարզպետներին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

N	Ապրանքի անվանումը	Տեղերի քանակը	Քանակը ըստ չափ միավորի /արկղ/	Ընդ. քաշը /կգ/	Մաքուր քաշը /կգ/	Արժեքը \$	Շահառուները
1	Բժշկական պարագաներ	111	111	867	402	18250	49 արկղ - «Ար. Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ 9 արկղ - «Ար. Աստվածամայր» ԲԿ 11 արկղ - «Սերաստիա» ԲԿ 42 արկղ - «Գյումրու «ԱՌԴԱ» առողջ. և աջակց կենտրոն» ԲԳ
2	Հաշմանդամի անվասայակ	1	1 հատ	29	29	350	«Ար. Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ
3	Հիվանդանոցի մահճակալ	2	2 հատ	34	34	1500	«Ար. Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ
4	Սիստեմայի շտատիվ	1	1 հատ	4	4	375	«Ար. Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ
5	Հիվանդի պատզարակ	5	5 հատ	45	45	1125	3 հատ - «Ար. Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ 1 հատ - «Ար. Աստվածամայր» ԲԿ 1 հատ - «Գյումրու «ԱՌԴԱ» ԱԱԿ» ԲԳ
6	Ատամնարուժ. պարագաներ	1	1	3	3	45	«Գյումրու «ԱՌԴԱ» առողջ. կենտրոն» ԲԳ
7	Վիրարուժ. պարագաներ	1	1	9	9	500	«Ար. Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ
8	Անեստիզացիայի մեքենա	1	1 հատ	663	363	25000	«Ար. Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ
9	Ծածկոցներ	6	6	54	54	425	2 արկղ - Հայ Ավետարանցական ընկեր-ուն 2 արկղ-Գյումրու «ԱՌԴԱ» մ/գ 2 արկղ- Կարիքավոր քաղաքացիներ
10	Խաղալիքներ	4	4	25	25	300	Գյումրու «ԱՌԴԱ» մանկապարտեզ
11	Գործվածք	7	7 փաթեթ	73	73	350	Գյումրու «ԱՌԴԱ» մանկապարտեզ
12	Գրասեղան	11	11 հատ	374	374	540	«Զեյնուն» ուսումնական կենտրոն
13	Մանկական աթոռներ	7	36 հատ	42	42	700	15 հատ - Վանաձորի թիվ 5 մ/գ 21 հատ - Վանաձորի թիվ 30 մ/գ
14	Գրեմական պիտույքներ	6	6	53	53	270	«Յանգ լայֆ» երիտ. միջազգային ԲԳ
15	Գրեմական պիտույքներ	4	4 պալետ	2094	2050	4500	0,5 պալետ - «Գյումրու «ԱՌԴԱ» ԱԱԿ» ԲԳ 1 պալետ - Գյումրու «ԱՌԴԱ» մ/գ 0,5 պալետ - Գյումրու թիվ 6 մ/գ 0,5 պալետ - Երևանի թ. 154 ՆՈՒԴ ԳՈԱԿ 1 պալետ - Կարիքավոր քաղաքացիներ 0,5 պալետ - Վանաձորի «ԱՌԴԱ» թաղ. բնկչ
16	Մանկական հագուստ	5	5	32	32	945	1 արկղ-Վանաձորի «ԱՌԴԱ» թաղ. բնկչ 1 արկղ - Գյումրու «ԱՌԴԱ» մ/գ 1 արկղ - Գյումրու թիվ 6 մ/գ 3 արկղ- Կարիքավոր քաղաքացիներ
17	Տղայի ժակետներ	1	1	5	5	130	Գյումրու «ԱՌԴԱ» մանկապարտեզ
19	Մանկական կոշիկներ	3	3	20	20	400	Գյումրու «ԱՌԴԱ» մանկապարտեզ
20	Աղջկա ժակետներ	2	2	15	15	175	«Գյումրու «ԱՌԴԱ» առողջ. կենտրոն» ԲԳ
22	Վերնաշապիկներ	2	2	14	14	170	1 արկղ - Վանաձորի «ԱՌԴԱ» թաղ. բնկչ 1 արկղ - «Յանգ լայֆ» երիտ. միջազգ. ԲԳ
23	Կանացի հագուստ	2	2	25	25	500	Վանաձորի «ԱՌԴԱ» թաղամասի բնակիչներ
24	Ընդամենը	183			3671	56400	



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունվարի 2011 թվականի N Մ-005-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-807-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի հունվարի 11-ի N 3/3.8-1/1131-11 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 30-ի
N ԱԱ/3-4/3366-10 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 20-ի «Գիտության և առաջա-
տար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2010 թվականի
ընթացքում երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցություն» ծրագրի
մասին» N Մ-807-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «2010թ. դեկտեմբերի
31-ը» բառերը փոխարինել «2011 թվականի հունվարի 31-ը» բառերով:

2. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնա-
դրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմի-
ջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և
դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեդիսար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02555635) 2010 թվականի դեկտեմբերի 13-ին
կնքված՝ N 101213/80 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լաբորատոր
նյութերի և պարագաների ձեռքբերում՝ 174770 դրամի չափով, առանց ավելացված արժեքի
հարկի:

3. Սույն որոշումով ստորագրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունվարի 2010 թվականի N Մ- 006 -Ա
քաղ. երևան


«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱ-
ԴՐԱՄԻ» ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N 3/3.8-2/10750-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 28-ի N ԱԱ/3-6/3309-10 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Ամերիկայի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հասցեով ստացված օգտագործված աթոռների և սեղանների (217 տեղ, 3045 կգ ընդհանուր քաշով, 43365 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7535 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարայան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Այս որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԱՀ


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

✓

«Գ. Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ 1/4. 7
ընտանիքների հիմնադրամի» անունով ուղարկված 217
տեղ, 3045 կգ բրուտտո, 3045 կգ նետտո քաշով 43,365
ԱՄՆ դոլար արժողությամբ, ճանապարհածախսը՝ 7,535
ԱՄՆ դոլար արժողությամբ բեռի բաշխման

ՑԱՆԿԸ

h/h	Ապրանքի անվանումը	Տեղ	Քաշ բրուտտո կգ	Քաշ նետտո կգ	Արժեք ԱՄՆ դոլար	ԼՂՀ Քաշաթաղի շրջ. սոցապ վարչություն
1.	Դպրոց. օգտ. աթոռներ և սեղաններ	217	3045	3045	43,365	217





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 հունվարի 2011 թվականի N **Մ-007** -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-896-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵՆՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N 3/3.8-2/10748-10, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 28-ի N ՖԲ/Մարտի-2/6522-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 28-ի N ԱԱ/3-6/3307-10 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն անապահով ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-896-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում բարեգործություն ստացողների ցանկին ավելացնել «Ծերերի խնամքի կենտրոնը, Արիեստի դպրոցում սովորող կարիքավոր ուսանողները, Տիրամայր Հայաստանի ճամբարին մասնակցող երեխաները, Հայաստանի Հանրապետությունում գործող այլ ճամբարները, «Արամ Մանուկյան-1918» հիմնադրամը, Շիրակի մարզի երեխաների հոգածության կենտրոնը, Հայ Կաթողիկե առաջնորդարանը, Մխիթարյան միաբանության հայկական մասնաճյուղը, Շիրակի մարզպետարանի կրթության բաժինը, Հայ օգնության ֆոնդը, Հայաստանի Հանրապետության հիվանդանոցները, հոգեբուժարանները, մանկատները և հասարակական կազմակերպությունները» բառերը:

2. Սահմանել, որ Ամերիկայի միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը

